

# Ծ Ի Ա Ծ Ա Ն

## ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՒԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՅԻՑ.

Քաղաքական խնդիրներն ու գոյությունը թիւնները տակաւին շատ հեռու են խաղաղութեամբ վերջանալու նշաններէն. եւ սակայն կերեւնայ թէ եւրոպայի գլխաւոր տէրութիւնները ամէն ջանք կրենք որ հասարակաց խաղաղութիւնը չվրդովի:

Անգղիոյ խորհրդարանին գլուխ՝ Լորտ Փալմերսթոնը մեծ հացկերութի մը ատեն խօսած ճառին մէջ այս ալ ըսեր է թէ «եւրոպայի մէջ այնչափ խնդիրներ կան որ եւ թէ մէկը կամենայ զանոնք կռուով լուծել, անտարակոյս հինգ վեց պատերազմէն աւելի պէտք կ'լինի բանալ. բայց այն խնդրոց մէջ մէկն ալ չկայ որ չկարենայ վերջանալ առանց արիւն թափուելու. ես այսքանը միայն կարող եմ ըսել թէ մեր թագուհւոյն կառավարութեան ջանքը այն է որ խաղաղութիւնը չվրդովի»: Կերեւի թէ Անգղիոյ այս քաղաքականութեամբն է որ Հռովմայ եւ Վենետիկ իտալիոյ հետ միանալուն խնդիրը դադրեցաւ՝ հակառակ Կարիպալտին կուսակիցներուն, այսինքն գրեթէ բոլոր իտալացւոց բաղձանացը:

Մէկ խօսքով, եւրոպայի քաղաքական գործերը առ այժմ սղասողական վիճակի մէջ են. ամէն խնդիրներն ալ եփելու վրայ են, բայց այլ եւ այլ ուժերով բռնութեամբ արգիլուած է անոնց բռնկիլը կամ ճայթիլը: Երկնակի համար, նախօրէն կայսրը պատրաստ կերեւնայ արեւելեան խնդիրը մեծցրնելու, եւ անկէջ զանազան հետեւանքներ հանելու. սակայն Անգղիոյ հետ ունեցած դաշինքը, գուցէ եւ Անգլիացւոց այս միջոցիւ բրած ահագին պատերազմական պատրաստութիւնները, արգելք են արեւելեան խնդրոյն շուտով ու պատերազմով վերջանալուն: Իհարկէ այս է փափաքելին որ այն խնդիրը խաղաղութեամբ վերջանայ, միայն թէ Ասորոց երկրին քրիստոնեաները ազատ մնան այսուհետեւ ջարդուելու վտանգէն. եւ ասոր

համար է որ Ռուսաց տէրութիւնը պաշտօնական կերպով ցաւ կցուցնէ Գաղղիացւոց այսպէս ատենէ դուրս Ասորոց երկրէն ելնելուն վրայ: Այսու ամենայնիւ կրենք թէ նոյն իսկ օսմանեան Դրան խնդրքովը՝ Պետութի մէջ 1000-էն մինչեւ 1500 գաղղիացի պահապան զօրք պիտի մնայ. կկարծուի թէ ասով՝ եթէ Ասորոց երկրին մէջ նորէն ջարդ մը պատահի՝ օսմանեան տէրութիւնը ամէն պատասխանատուութենէ ազատ կրնայ մնալ:

Այն վայրն որ կար թէ իտալիոյ մէջ պատերազմ պիտի բացուի, առ այժմ բոլորովին փարատեցաւ: Կարիպալտին տեսնելով որ Թուրքիի խորհրդարանին մէջ իրեն պատերազմական յորդորանքներն ընդունելի չեղան, գնաց առաջ Քրեմնա քաղաքը, յետոյ դարձեալ քաշուեցաւ իւր Քափրեբա կղզին, սպասելով որ իտալիան իրեն օգնութեանը կարօտութիւն ցուցնէ:

Ձայն մը կայ թէ Գաղղիացւոց զօրքերը պիտի ելնեն մօտեքս Հռոմէն, եւ նոցա տեղը Փիէմոնթեցիք պիտի մտնեն հոն:

Աւստրիոյ տէրութիւնը իտալիոյ մէջ ունեցած բանակին գնդապետներէն եւ սպաններէն մէկքանիին առժամանակեայ արձակուրդ տուեր է. ասով ալ կիմացուի թէ առ այժմ պատերազմի վայր հեռացած է այն կողմերէն: Բայց Մաճառստանի վիճակը այնպէս չէ. Մաճառները առաջ քանի մը ազատութիւն միայն կուզէին. իսկ այժմ ոտք կ'օխեր են որ բոլորովին ազատ տէրութիւն լինին՝ անկախ Աւստրիոյ կառավարութենէն, այնպէս որ միայն անունով մնայ Աւստրիոյ կայսրը թագաւոր Մաճառաց:

Ամերիկայի մէջ գրեթէ երկու ամիս է որ պատերազմը բացուած է, եւ հարաւային ու հիւսիսային ամերիկացի համազգի եղբայրները անգթաբար կ'ջարդեն մէկմէկ՝ իրենեւ անհաշտելի թշնամիք:

ՀԱՆՔԼՈՒԿՆԵՐՈՒՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ.

Աղաւնոյս Մայիս ամսոյն Հանելուկն էր ԳՈՒԼԻԷԼՄՈՍ ԹԵԼ:

Ցարոյս Օրացուցին Յունիս ամսոյն Հանելուկներն են. 1) ԶԻՔ. — 2) ՎԱՂԻԻ. — 3) ԱՔԱՐ (ա. բար):

Հրամայեցաք տպագրել. Իթեղոսիա, Ի27 Մայիսի 1861. Գարրիէլ Վ. Այվազեան.

ԻՏԱՊԱՆԻ ԽԱՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ: